ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«10» հունիսի 2019 թվականի № 04-Ն

«Վ.Հ.Վ ԷՅՐԼԱՅՆՍ» ՓԲԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «Վ.Հ.Վ ԷՅՐԼԱՅՆՍ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 160-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությանը 2018 թվականի մայիսի 30-ի թիվ 03/29.4/2706-18 գրությամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում ընկերության կողմից թույլ տրված խախտումները 90-օրյա ժամկետում վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ 01.12.2017թ-ի դրությամբ պետական տուրքի մասով 1 309.6 (մեկ միլիոն երեք հարյուր ինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ինչպես նաև սահմանված ժամկետներում լիազոր մարմին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Վարույթն իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն փաստը, որ լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերի և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-060 պայմանագրի 3.4 կետի 3.4.7 ենթակետում և 5-րդ կետով նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: Ընկերությունը զգուշացման վերաբերյալ ծանուցումը ստացել է 2018 թվականի հունիսի 11-ին, սակայն առ

այսօր չի վերացրել զգուշացման հիմքերը: 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 160-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Նապարարությունը պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ իրազեկել է Ընկերությանը վարչական վարույթի հարուցման և վարչական լսումների վերաբերյալ: Ընկերության կողմից վարչական վարույթի նիստերին մասնակցություն չի ապահովվել: Սույն վարչական վարույթը երկու անգամ երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վ.Հ.Վ ԷՅՐԼԱՅՆՍ» ՓԲ ընկերության ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի բազալտի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնել:

2. 2012 թվականի հոկտեմբերի 31-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/060 (նախկին 14/274) թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼՎ-060 ակտն ուժը կորցրած ճանաչել և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-060 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) երկօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3) սահմանված կարգով ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

1/10/2019

X

VERIFIED OCSP 1/10/2019 15:26:55 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
/ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ